**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3**
**ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/77 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**
**(Անվադողեր)**

ք. Երևան

01 հոկտեմբերի 2019թ.
ժամը 11:00

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝**
Արմեն Գևորգյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ
**Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ**
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.
**Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ**
Վրմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.
Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող.
**Հանձնաժողովի քարտուղար՝**
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

***1. Ընդունել ի գիտություն.***

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/77» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Բիգ Պլաստ» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիր/:

***2. Հանձնաժողովն արձանագրեց.***

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցի կողմից ներկայացվել են սահմանված ժամկետում և համապատասխանում են հրավերի պահանջներին:

***3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.***

3.1 Ընտրված մասնակից ճանաչել «Բիգ Պլաստ» ՍՊ ընկերությունը 1-ին չափաբաժնով
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.2 Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/77 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

**Հանձնաժողովի**

| | | |
|---|---|---|
| նախագահ՝ | ________ | Ա. Գևորգյան |
| անդամներ՝ | ________ | Գ. Բոյաջյան |
| | ________ | Հ. Ծատուրյան |
| | ________ | Ա. Մկոյան |
| | ________ | Տ. Ալեքսանյան |
| քարտուղար՝ | ________ | Ա. Գալուստյան |